ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՍՏՂԻԿ ՅՈՒՐԻԿԻ

ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

**ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2024

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Լաուրա Թոռնիկի Ասատրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Մանուկ Աշոտի Մկրտչյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու՝ **Հովաննես Հարությունի Կարապետյան**

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024թ. հունիսի 20-ին՝ ժամը 12^{00} –ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024թ.-ի մայիսի 17-ին:

Մանկավարժության 020 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ **Թերեզա Յուրիի Ազատյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը. Արդի ժամանակաշրջանում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների բուռն ներթափանցումը հասարակական կյանքի բոլոր ոլորտները պահանջում է կրթության և դաստիարակության համակարգի գերակայությունների վերահիմաստավորում՝ շեշտը դնելով «մարդկային գործոնի» և անձի զարգացման հիմնախնդիրների վրա: Որպես բարձրագույն արժեք դիտարկվում է ազատ, կրթված, զարգացած անհատը, որն ընդունակ է ապրել ու ստեղծագործել հարափոփոխ աշխարհում, լինել մրցունակ մասնագիտական ոլորտում, ինտեգրվել հանրության մեջ, գիտակցել իր սոցիալական դերը, ունենալ իր սեփական դիրքորոշումը, տիրապետել ազգային և համամարդկային արժեքներին:

Այսօր կրթական հաստատությունները կանգնած են ուսուցման նոր մարտահրավերների առջև, որոնք հանրակրթական դպրոցից պահանջում են ուսուցման բովանդակության արդիականացում, տարբերակված և անհատականացված սկզբունքների հաշվառում, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում՝ յուրաքանչյուր աշակերտի ստեղծագործական ներուժի և կարողությունների զարգացումը լիարժեք իրականացնելու նպատակով:

Ներառական կրթության խնդիրների իրականացման համատեքստում տարբերակված ուսուցումը դարձել է տարրական դպրոցում կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման տեխնոլոգիաներից մեկը՝ հնարավորություն ընձեռելով տարբեր ընդունակություններ, ուսումնական հնարավորություններ և կարողություններ ունեցող աշակերտի ունենալ իր կրթական հետագիծը, բավարարել կրթական պահանջմունքները:

Վերոնշյալը մեկ անգամ ևս փաստում է, որ կրթության ռազմավարական նպատակներին հասնելու և ուսուցման արդյունավետության բարձրացման համար հսկայական նշանակություն ունի տարրական դպրոցի ուսուցման գործընթացում տարբերակված տարամակարդակ ուսուցման մեթոդական-տեխնոլոգիական համակարգի ներդնումը:

Հիմնախնդրի վերաբերյալ գիտամանկավարժական գրականության վերլուծությունը և հանրապետության հանրակրթական դպրոցներում մեր ուսումնասիրությունները թույլ տվեցին բացահայտել այդ ոլորտում առկա մի շարք հակասություններ.

- տարրական դպրոցում տարբեր ընդունակություններով օժտված երեխաների ուսուցման գործընթացում անձնակողմնորոշված և տարբերակված մոտեցման սկզբունքների հաշվառման անհրաժեշտության և դպրոցների ուսուցչական կազմի կողմից դրա հիմունքների ոչ բավարար յուրացվածության միջև,

- սովորողների ընդունակությունների և ուսումնական հնարավորությունների տարբերության և կրթական միասնական չափորոշիչների պահանջների միջև,
- կրթական գործընթացում ուսուցման տարբերակված ձևերի, միջոցների, մեթոդների, տեխնոլոգիաների ներդրման և դրանց արդյունավետ գործառնության մանկավարժական պայմանների ոչ բավարար մշակվածության միջև:

Այս հակասությունների լուծմամբ է պայմանավորված մեր հետազոտության թեմայի արդիականությունը: **Հետազոտության նպատակը**. Տարրական դպրոցում տարբերակված ուսուցման հիմնախնդրի արդյունավետ լուծման ուղիների առաջադրումն ու ներդասարանային տարբերակված ուսուցման մոդելի մշակումն է: **Հետազոտության օբյեկտը** տարրական դպրոցի ուսուցման գործընթացն է: **Հետազոտության առարկան** տարբերակված ուսուցման հիմնախնդրի լուծման ուղիներն են տարրական դպրոցում: **Հետազոտության վարկածը** մեր այն ենթադրությունն է, որ ներառականության պայմաններում տարրական դպրոցի ուսուցման գործընթացը կլինի արդյունավետ, եթե՝

- տարրական դասարաններում իրականացվի ներդասարանային տարբերակված տարամակարդակ ուսուցում՝ ելնելով սովորողների տարիքային և անհատական առանձնահատկություններից, ընդունակություններից, ուսումնական հնարավորություններից, կրթության անձնակողմնորոշված, մարդասիրական, հաղորդակցական, կոմպետենտային, զարգացնող և կարողունակությունների վրա հիմնված մոտեցումներից,
- բացահայտվեն և հաշվի առնվեն տարրական դպրոցում տարբերակված տարամակարդակ ուսուցման սկզբունքներն ու առանձնահատկությունները,
- տարրական դասարաններում դասավանդվող առարկաների բովանդակության լիարժեք յուրացման, սովորողների հետաքրքրությունների, կարողությունների, մտածողության տարբեր ձևերի զարգացման համար առաջարկվեն տարբերակված ուսուցման արդյունավետ ուղիներ, որոնք կներառեն ուսուցման հետաքրքիր ձևեր, մեթոդներ, տեխնոլոգիաներ և տարբերակված տարամակարդակ բազմաբնույթ առաջադրանքներ, խաղեր, հայտորոշիչ թեստեր,
- մշակվի և տարրական դպրոցում ներդրվի ներդասարանային տարբերակված տարամակարդակ ուսուցման մոդելը, որը կապահովի

կրտսեր դպրոցականների ուսումնառության գործընթացի արդյունավետությունը՝ ուղղորդելով նաև ուսուցչի աջակցող և մոտիվացնող գործունեությունը,

- որոշարկվեն տարբերակված ուսուցման մանկավարժական պայմանները, որոնց ապահովումը արդյունավետ կդարձնի առաջարկվող ներդասարանային տարբերակված տարամակարդակ ուսուցման մոդելի գործառնությունը:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել և վերլուծել տարբերակված ուսուցման տեսական-մեթոդաբանական հիմքերը և հիմնախնդրի վիճակը հանրակրթական դպրոցներում:
2. Բացահայտել և հաշվի առնել տարրական դպրոցում տարբերակված տարամակարդակ ուսուցման սկզբունքներն ու առանձնահատկությունները:
3. Տարրական դպրոցի համար մշակել և առաջադրել տարբերակված ուսուցման արդյունավետ ուղիներ, որոնք ներառում են ներդասարանային տարբերակված ուսուցման հետաքրքիր ձևեր, փոխներգործուն մեթոդներ, ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ, դասերի տեսակներ, տարբերակված տարամակարդակ առաջադրանքներ, խաղեր, հայտորոշիչ թեստեր:
4. Մշակել և տարրական դպրոցում ներդնել ներդասարանային տարբերակված տարամակարդակ ուսուցման արդյունավետ մոդելը, որում ներառնված լինեն կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության նպատակը, առանձնահատկությունները, ուսուցման սկզբունքները, ժամանակակից մանկավարժական մոտեցումները, փոխներգործուն մեթոդներն ու տեխնոլոգիաները, տարամակարդակ տարբերակված առաջադրանքները, խաղերը, հայտորոշիչ թեստերը:
5. Առաջարկել տարբերակված ուսուցման մանկավարժական պայմանների համալիր, որի ապահովումը արդյունավետ կդարձնի մշակված ներդասարանային տարբերակված տարամակարդակ ուսուցման մոդելի գործառնությունը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմել՝

-հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական, մեթոդական հետազոտությունները, տեսությունները, հայեցակարգային մոտեցումները և տարբերակված տարամակարդակ ուսուցման միջազգային փորձը,

-ուսումնական գործունեության տեսությունը (Վ.Վ.Դավիդով, Լ.Վ.Զանկով, Դ.Բ.Էլկոնին, Ն.Մ.Մենչինսկայա, Վ.Կ.Դյաչենկո, Մ.Ա. Մկրտչյան, Վ. Ջ.Մկրտչյան),

-տարբերակված ուսուցման վերաբերյալ տեսությունները և հայեցակարգային մոտեցումները(Վ.Պ. Բարաբաշ, Ն.Մ.Վոսկրեսենսկի, Ա.Գրոտտ, Ե.Յա.Գոլանտ, Ա.Յու. Գորչև, Ե.Ս. Ռաբունսկի, Գ.Կ.Սելևկո, Ի.Մ.Օսմոլովսկայա,

Ս.Ե.Պոկրովսկայա, Ա.Ո.Պերեվոզնիյ, Ի.Ե.Ունտ, Վ.Դ.Շադրիկով, Ն.Մ.Շահմաև, Յու.Ա.Ամիրջանյան և այլն,

-կրթության կազմակերպման համակարգային, արժեբանական, մարդաբանական, կոմպետենտային մոտեցումները (Ի.Ա.Զիմնյայա, Վ.Վ. Սաֆոնովա,Վ. Դ.Շադրիկով, Ե.Վ. Բոնդարևսկայա, Վ.Ա.Սլաստենին, Մ.Գ.Աստվածատրյան և այլք):

Հետազոտության մեթոդները

Առաջադրված խնդիրների լուծման համար կիրառվել են՝

- տեսական հետազոտությունների և մանկավարժական առաջավոր փորձի վերլուծության ու ընդհանրացման,
- Էմպիրիկ՝ դիտում, զրույց, սոցհարցումներ,
- մաթեմատիկական-վիճակագրական վերլուծության մեթոդներ:

Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով՝

Հետազոտության առաջին փուլում (2017-2019թթ.) ուսումնասիրվել և վերլուծվել են հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական, մեթոդական գրականությունն ու հայեցակարգերը: Սահմանվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը և խնդիրները:

Երկրորդ փուլում (2019-2021թթ.) սահմանվել են հետազոտության սկզբունքները և մեթոդները, նախագծվել են տարբերակված տարամակարդակ ուսուցման կազմակերպման ուղիները: Որոշակիացվել են տարրական դպրոցում դրանց արդյունավետ կիրառման մանկավարժական պայմանները, իրականացվել են սոցիոլոգիական հարցումներ՝ առաջադիր վարկածը ստուգելու համար:

Երրորդ փուլում (2021-2023թթ) անցկացվել է փորձարարական հետազոտություն, որի ընթացքում ստուգվել և հիմնավորվել է տարբերակված տարամակարդակ ուսուցման կազմակերպման առաջարկվող ուղիների արդյունավետությունը: Կատարվել է փորձարարության արդյունքների վերլուծություն, ընդհանրացում և ատենախոսության ձևավորում:

Հետազոտության գիտական նորույթը.

1. նախագծվել և տարրական դպրոցի պրակտիկայում ներդրվել են տարբերակված տարամակարդակ ուսուցման կազմակերպման ուղիները, որոնց թվին մենք դասում ենք ուսուցման փոխներգործուն և առաջարկվող հեղինակային արդյունավետ մեթոդները, տեխնոլոգիաները, ձևերը, ինչպես նաև տարբերակված տարամակարդակ բազմաբնույթ առաջադրանքները:
2. Մշակվել և տարրական դպրոցում ներդրվել է հեղինակային տարբերակված ուսուցանող և զարգացնող դիդակտիկ խաղերի համալիրը:
3. Մշակվել է ներդասարանային տարբերակված տարամակարդակ ուսուցման մոդելը, որը ներառում է.

- տարբերակված ուսուցման նպատակը
- տարրական դպրոցում տարբերակված ուսուցման սկզբունքներն ու առանձնահատկությունները,
- ժամանակակից մանկավարժական մոտեցումները,

- ուսուցման փոխներգործուն և հեղինակային մեթոդներն ու տեխնոլոգիաները, դասերի ձևերը, տարբերակված բազմաբնույթ առաջադրանքները, թեմատիկ, դասարանական, ինքնուրույն աշխատանքները, խաղերը, հայտորոշիչ թեստերը, որոնք նպաստում են ուսումնական տարբեր հնարավորություններ և զարգացման մակարդակներ ունեցող սովորողների լիարժեք ինքնադրսևորմանը և տարրական դպրոցին ներկայացվող չափորոշչային պահանջների իրականացմանը:

4. Առաջարկվել են տարբերակված տարամակարդակ ուսուցման մոդելի արդյունավետ գործառնությունն ապահովող մանկավարժական պայմաններ:

Հետազոտության տեսական նշանակությունը. առաջարկվել են ներառական կրթության պայմաններում տարրական դպրոցում տարբերակված տարամակարդակ ուսուցման կազմակերպման նոր մոտեցումներ և տեսական դրույթներ: Տարբերակված տարամակարդակ ուսուցման առաջարկվող ուղիները, հեղինակային մեթոդները, ուսուցանող և զարգացնող խաղերի համալիրը կհարստացնեն մանակավարժության տեսությունը:

Հետազոտության գործնական նշանակությունը. հետազոտության արդյունքները կարող են ներդրվել տարրական դպրոցի ուսուցման գործընթացում սովորողների գիտելիքների, ստեղծագործական, հետազոտական կարողությունների, մտածողության տարբեր ձևերի արդյունավետ զարգացման նպատակով, իսկ առաջարկվող տարբերակված տարամակարդակ ուսուցման ուղիներն ու հեղինակային մեթոդները, ուսուցանող և զարգացնող խաղերի համալիրը, գործնական օգնություն կլինեն տարրական դպրոցի ուսուցիչներին:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Հանարակրթական տարրական դպրոցում տարամակարդակ տարբերակված ուսուցման կազմակերպումը՝ հաշվի առնելով սովորողների ճանաչողական, անհատական առանձնահատկությունները, ընդունակությունները և ուսումնական հնարավորությունները, պետական չափորոշիչներով սահմանված գիտելիքների յուրացման, կարողունակությունների, արժեհամակարգի, դիրքորոշման և վերաբերմունքի արդյունավետ զարգացման անհրաժեշտ պայման է:
2. Առաջարկվող տարբերակված տարամակարդակ ուսուցման ուղիները ներառական կրթության պայմաններում նպաստում են տարրական դպրոցում ուսումնական տարբեր հնարավորություններ և ընդունակություններ ունեցող սովորողների գիտելիքների արդյունավետ յուրացմանը, նրանց ստեղծագործական, հետազոտական կարողությունների ու հմտությունների զարգացմանը, արժեքային կողմնորոշումների ձևավորմանն ու կյանքին նախապատրաստմանը:
3. Հեղինակային տարբերակված տարամակարդակ ստեղծագործական, քարտային առաջադրանքները, ուսուցման մեթոդները, ուսուցանող և զարգացնող դիդակտիկ խաղերը, թեմատիկ, դասարանային, ինքնուրույն աշխատանքները, հայտորոշիչ թեստերն ակտիվացնում են տարբեր ընդունակություններ և ուսումնական հնարավորություններ ունեցող սովորողների մասնակցությունը դասագործընթացին և ըստ մակարդակների գիտելիքների յուրացումը:

4. Առաջարկվող տարբերակված տարամակարդակ ուսուցման մոդելը, որը ներառում է.

- տարրական դպրոցում տարբերակված ուսուցման նպատակը, սկզբունքներն ու առանձնահատկությունները,
- ժամանակակից մանկավարժական մոտեցումները,
- ուսուցման փոխներգործուն և հեղինակային մեթոդների, տեխնոլոգիաների, դասերի ձևերի, տարբերակված բազմաբնույթ առաջադրանքների, տարբեր առարկաներից խաղերի համալիրի ներդնումը տարրական դպրոցում էականորեն նպաստում է ուսումնական տարբեր հնարավորություններ և զարգացման մակարդակներ ունեցող սովորողների լիարժեք ինքնադրսևորմանը և հանրակրթական դպրոցի տարրական աստիճանին ներկայացվող չափորոշչային պահանջների իրականացմանը:

5. Առաջարկվող մանկավարժական պայմանների համալիրը, որը ապահովում է ներդասարանային տարբերակված տարամակարդակ ուսուցման մոդելի արդյունավետ գործառնությունը:

Հետազոտության բազան: Հետազոտության իրականացման համար փորձարարական բազա են հանդիսացել Երևան քաղաքի Արմեն Հովհաննիսյանի անվան թիվ 194 և Լևոն Միրիջանյանի անվան թիվ 155 հիմնական դպրոցները, Շիրակի մարզի Ձորակապ գյուղի միջնակարգ դպրոցը:

Ատենախոսության թեմայի վերաբերյալ հրատարակվել են հոդվածներ և զեկուցումներ հանրապետական գիտաժողովներում, ինչպես նաև ատենախոսի կողմից ԿՏԱԿ-ի հարթակում իրականացվել է ուսուցիչների, սոցիալական աշխատողների, լոգոպեդների և հոգեբանների հեռավար վերապատրաստման դասընթացներ:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված են աշխատանքի գիտական ապարատով և մեթոդաբանությամբ, հետազոտության տեսական, էմպիրիկ և վիճակագրական մեթոդների կիրառմամբ, տարրական դպրոցի ուսուցիչների փորձի ուսումնասիրությունների արդյունքներով, հետազոտական աշխատանքների տևողությամբ, դրանցում հետազոտվողների լայն ընդգրկվածությամբ, ստացված արդյունքների ընդհանրացմամբ և այդ ոլորտում ատենախոսի անձնական ներդրմամբ:

Ատենախոսության ծավալն ու կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, 107 անուն գրականության ցանկից, հավելվածներից: Այն պարունակում է 2 աղյուսակ, 9 տրամագիր: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային 189 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, սահմանված են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, առաջադրված է գիտական վարկածը,

ներկայացված են գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ձևակերպված են պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին՝ «Հանրակրթական դպրոցում տարբերակված ուսուցման տեսական-մեթոդաբանական հիմքերը». խորագիրը կրող գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Տարբերակված ուսուցման վերաբերյալ տեսական-մեթոդաբանական մոտեցումների վերլուծություն», դիտարկվել են հիմնախնդրի վերաբերյալ տեսական և հայեցակարգային մոտեցումները: Հանգել ենք այն գիտական հետևությանը, որ **սովորողների տարբերակված ուսուցման վերաբերյալ գաղափարները ձևավորվել են դեռևս վաղ ժամանակներից: Ընդորում գիտական գրականության վերլուծությունը ցույց տվեց, որ «տարբերակված ուսուցում» հասկացության վերաբերյալ առկա են հայեցակարգային տարբեր մոտեցումներ և չկա միասնական մոտեցում այդ հասկացության սահմանմանը:**

Նշվում է, որ անձի զարգացման նոր հայեցակարգով պայմանավորված 21-րդ դարի սկզբներին դարձյալ առաջին պլան է մղվել անձնակողմնորոշված ուսուցման խնդիրը, որը ենթադրում էր անհատականացված և տարբերակված մոտեցումների կիրառում ուսուցման գործընթացում: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մանկավարժական գրականությունում առանձնացվում են տարբերակման մի շարք տեսակներ ու ձևեր:

Ելնելով հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականությունում առկա տեսական մոտեցումների վերլուծությունից՝ հանգեցինք այն հետևությանը, **որ տարրական դպրոցում տարբերակված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման նպատակը ուսուցման գործընթացում մտավոր զարգացման տարբեր մակարդակներ, ընդունակություններ և ուսումնական հնարավորություններ ունեցող սովորողների կողմից գիտելիքների յուրացման, կարողությունների, հմտությունների զարգացման և արժեքային համակարգի, դիրքորոշումների ու վերաբերմունքի ձևավորման արդյունավետության բարձրացումն է:**

Մեր կողմից նորովի է սահմանվել «**տարբերակված ուսուցում**» հասկացությունը. «**Տարբերակված ուսուցումը ուսումնական աշխատանքի այնպիսի կազմակերպումն է, երբ յուրաքանչյուր աշակերտ դպրոցական ծրագրի առանձին առարկաների գծով հնարավորություն ունի տիրապետելու ուսումնական նյութին տարբեր մակարդակով՝ կախված իր անհատական առանձնահատկություններից, երբ որպես աշակերտի ուսումնական գործունեության արդյունավետության գնահատման չափանիշ ընդունվում է դասանյութն իր ուսումնական հնարավորությունների սահմաններում յուրացնելը, դրա գործնականում կիրառման կարողություններին տիրապետելու նրա ձգտումներն ու հմտությունները:**

Երկրորդ ենթագլխում՝ «Կրտսեր դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկությունների բնութագիրը» բութագրված են կրտսեր դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկությունները: Նշվում է, որ ուսուցման գործընթացում զարգանում է կրտսեր դպրոցականների ստեղծագործական երևակայությունը, գործունեության հուզակամային ոլորտը, որոնք կարևոր դեր են կատարում ուսուցման գործընթացում:

Երրորդ ենթագլխում՝ «Տարբերակված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկությունները, սկզբունքներն ու մանկավարժական պայմանները տարրական դպրոցում», բնութագրված են մեր կողմից առանձնացված տարբերակված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկությունները, սկզբունքներն ու մանկավարժական պայմանները:

Տարբերակված ուսուցման առանձնահատկություններն են՝

- երեխաների արագ աճը և կենսական խնդիրներին, տեղեկատվական տեխնոլոգիաներին նրանց տիրապետումը,
- զուգահեռ կյանքը իրական և վիրտուալ աշխարհներում, համակարգչային կախվածությունը,
- հատվածային մտածողությունը և առանց նկարազարդումների երկար տեքստերի ընկալման դժվարությունները,
- հետաքրքրասիրությունը,
- դասարանի ներսում տարբերակված ուսումնական աշխատանքի կազմակերպումը նույն՝ քիչ թե շատ կայուն անհատական հատկանիշներով սովորողների խմբերի հետ:

Տարբերակված ուսուցման սկզբունքները.

- վստահության մթնոլորտի ստեղծում ուսուցիչների և սովորողների միջև,
- ուսուցիչների կողմից տարբեր մանկավարժական մեթոդների և միջոցների կիրառման հնարավորության ապահովում,
- յուրաքանչյուր երեխայի ուսումնական հնարավորություններին և ընդունակություններին համապատասխան ուսումնական ծրագրի և գնահատման համակարգի հարմարեցում,
- կամավորության, եթե երեխան չի կարողանում ամբողջովին յուրացնել դասանյութը, ապա նա կարող է կատարել իր ուսումնական հնարավորություններին հասանելի պարզ առաջադրանքներ,
- կենտրոնացումը երեխայի ինքնուրույնության վրա. սովորեցնել երեխաներին մտածել, ստեղծագործել, նախագծել, հետազոտել, գտնել տեղեկատվություն և մեխանիկորեն չյուրացնել պատրաստի նյութը,
- հարգանք երեխայի անձի և իրավունքների նկատմամբ,

- ուսուցման անհատականացում և տարբերակում. յուրաքանչյուր սովորողի անհատական տեմպերով գիտելիքները յուրացնելու, կարողությունները զարգացնելու հնարավորություն,
- անհատապաշտական և մրցակցային ձևերի բացառում տարրական դպրոցի ուսուցման գործընթացում:

Հիմնավորվում է, որ տարբերակված մոտեցման սկզբունքը ենթադրում է ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպում ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի համար, ինչն էլ իր հերթին ենթադրում է տարամակարդակ բազմաբնույթ առաջադրանքների, հայտորոշիչ թեստերի կիրառում, որը հնարավորություն է տալիս ուսումնական տարբեր հնարավորություններ և ընդունակություններ ունեցող աշակերտին յուրացնել կրթական չափորոշչով նախատեսված գիտելիքների, կարողությունների և հմտությունների նվազագույն ծավալը:

Ներկայացված է նաև մեր կողմից առանձնացված տարբերակված ուսուցման **մանկավարժական պայմանների համալիրը,** որը արդյունավետ է դարձնում առաջարկվող ներդասարանային տարբերակված տարամակարդակ ուսուցման մոդելի գործառնությունը:

Տարբերակված ուսուցման մանկավարժական պայմաններն են՝

1. ուսուցման գործընթացի տեղեկատվական և տեխնոլոգիական աջակցություն, որը ենթադրում է տեղեկատվական մեթոդների, ձևերի, միջոցների և տեխնոլոգիաների համակցություն,
2. ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպում ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի համար,
3. երեխայի անհատականության զարգացման և ինքնազարգացման ապահովման մանկավարժական աջակցության ուղիների և միջոցների կիրառման ռազմավարության առկայություն, որը ենթադրում է՝

ա) աշակերտի դերի և տեղի տեսլականը սոցիալական հարաբերությունների համակարգում և նրա հարաբերություններն արտաքին աշխարհի հետ, դիրքորոշումների և արժեքային վերաբերմունքի սերտաճում,

բ) երեխայի անհատականության ներքին արժեքը հասկանալու և դրա զարգացման համար պայմանների ստեղծում՝ ուսուցման տարբերակված ձևերի, միջոցների և մակարդակների ընդլայնման միջոցով,

գ) աշակերտի ճանաչողական և ստեղծագործական կարողությունների, նրա անհատականության զարգացման և ինքնազարգացման մանկավարժական աջակցության ուղիների և միջոցների, տարբերակված ուսուցման տարբեր մոդելների կիրառում,

4. կողմնորոշումը սովորողների անհատական հոգեբանական առանձնահատկությունների, նրանց անհատական նյարդահոգեբանական բնութագրերի նկատմամբ:

Երկրորդ գլուխը՝ «Տարրական դպրոցում տարբերակված ուսուցման հիմնախնդրի իրականացման ուղիների արդյունավետության փորձարարական հիմնավորումը», բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Տարբերակված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման ձևերը տարրական դպրոցի ուսուցման գործընթացում», ներկայացված են մեր կողմից առաջարկվող տարբերակված ուսուցման ձևերը **«Մայրենի», «Մաթեմատիկա», «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկաներից: Դրանք հետևյալն են՝**

- **տարբերակված տարամակարդակ քարտային, դասարանական, տնային առաջադրանքները, թեմատիկ և ինքնուրույն գրավոր աշխատանքները,**
- **տարբերակված տարամակարդակ քարտային կոլեկտիվ ուսումնական աշխատանք զույգերով կամ փոքր խմբերով,**
- **տարբերակված տարամակարդակ ստեղծագործական գրավոր աշխատանքները,**
- **տարբերակված տարամակարդակ հայտորոշիչ թեստերը,**
- **տարբերակված տարամակարդակ խաղերը:**

Երկրորդ ենթագլխում՝ «Տարբերակված ուսուցանող և զարգացնող խաղերի կիրառումը տարրական դպրոցում որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց», ներկայացված են մեր մշակված ուսուցման հեղինակային մեթոդները և ուսուցանող ու զարգացնող տարբերակված խաղեր 1-4–րդ դասարանների համար, որոնք արդյունավետորեն կիրառում ենք ուսումնական գործընթացում: Այն ներկայացվել է ԿՏԱԿ-ի հեռավար հարթակում և դարձել է վերապատրաստման նյութ՝ ներգրավելով 40 ուսուցչի, հոգեբանների, լոգոպեդների և հատուկ մասնագետների:

Հիմնավորվում է, որ տարբերակված ուսուցանող և զարգացնող խաղերը տարրական դասարաններում ուսուցումը դարձնում են հետաքրքիր, նպաստում են կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողության, ընդունակությունների, սոցիալական կարողությունների զարգացմանը:

Երրորդ ենթագլխում՝ «Տարրական դպրոցում ներդասարանային տարբերակված տարամակարդակ ուսուցման մոդելի կառուցվածքի ընդհանուր բնութագիրը», ներկայացված է տարրական դպրոցում ներդասարանային տարբերակված եռամակարդակ ուսուցման **մոդելի կառուցվածքը**, որի բաղադրիչներն են՝

- տարամակարդակ ուսուցման նպատակը,
- անձնակողմնորոշված, մարդասիրական, հաղորդակցական, կոմպետենտային, զարգացնող մոտեցումները,

- տարբերակված ուսուցման սկզբունքները և առանձնահատկությունները,
- տարբերակված ուսուցման արդյունավետ ուղիները,
- մանկավարժական պայմանները,
- ակնկալվող վերջնարդյունքները:

Ներկայացված և բնութագրված են մեր կողմից առաջարկած **տարբերակված տարամակարդակ ուսուցման ուղիները**.

- ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառում,
- ժամանակակից տեխնոլոգիաների և միջոցների կիրառում,
- տարբերակված տարամակարդակ առաջադրանքների հանձնարարում,
- տարբերակված ուսուցանող և զարգացնող տարամակարդակ խաղերի կազմակերպում,
- տարբերակված տարամակարդակ հայտորոշիչ թեստերի կիրառում,
- տարբերակված տարամակարդակ թեմատիկ, դասարանական, տնային և ինքնուրույն աշխատանքների հանձնարարում:

Չորրորդ ենթագլխում՝ «Փորձարարական աշխատանքների կազմակերպումը և մեթոդիկան», ներկայացված են հետազոտության կազմակերպման ընթացքը և արդյունքների վերլուծությունը: Առաջարկվող ներդասարանային տարբերակված տարամակարդակ ուսուցման մոդելի ներդնումը տարրական դպրոցում եզրափակվել է դրա արդյունավետության հիմնավորման նպատակով աշակերտներին, ուսուցիչներին և ծնողներին ուղղված հարցումների, ինչպես նաև տարբերակված տարամակարդակ առաջադրանքների ներդրման արդյունքների մաթեմատիկական և վիճակագրական վերլուծությամբ, որոնք ներկայացված են աղյուսակների և տրամագրերի ձևով:
Ստացված արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ հետազոտական փորձարարության սկզբում ստացված տվյալների համեմատությամբ փորձարարության վերջում զգալի դրական դինամիկա է արձանագրված: Եթե առաջին փուլում **«Մայրենի»** ուսումնական առարկայի գիտելիքների ձևավորվածության ցածր մակարդակը ստուգիչ խմբում կազմում էր 28%, իսկ փորձնական խմբում՝ 27%, միջին մակարդակը համապատասխանաբար՝ 47%, 50% և բարձր մակարդակը՝ 26%, 23%, ապա երկրորդ փուլում ստուգիչ խմբում ցածր մակարդակը կազմում էր 25%, իսկ փորձնական խմբում՝ 13%, միջին մակարդակը ստուգիչ խմբում 48%, փորձնական խմբում՝ 47%, բարձր մակարդակը կազմում էր ստուգիչ խմբում 27 %, փորձնական խմբում՝ 40% (**աղյուսակ 1, տրամագրեր 1, 2**):

Աղյուսակ 1

Փորձարարության հաստատող փուլում ստացված տվյալները

Մակարդակներ	Ստուգիչ խումբ		Փորձնական խումբ	
	Փորձ. սկզբում	Փորձ. վերջում	Փորձ. սկզբում	Փորձ. վերջում
Ցածր	28	25	27	13
Միջին	47	48	50	47
Բարձր	25	27	23	40



Տրամագիր 1. Փորձարարության սկզբում և վերջում ստուգիչ խմբում ստացված տվյալները:



Տրամագիր 8. Փորձարարության սկզբում և վերջում փորձնական խմբում ստացված տվյալները:

Այսպիսով, ի մի բերելով հետազոտության առաջին և երկրորդ փուլերում ստացված տվյալները, կարող ենք պնդել, որ փորձնական խմբերում զգալի դրական դինամիկա է արձանագրվել բոլոր մակարդակներում:

Մեր հետազոտության տվյալները համոզիչ կերպով ցույց տվեցին, որ տարբերակված ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը տարրական դպրոցում էականորեն նպաստում է դասավանդվող առարկաների բովանդակության լիարժեք յուրացմանը, ուսումնական տարբեր ընդունակություններ և հնարավորություններ ունեցող սովորողների կարողությունների, մտածողության տարբեր ձևերի զարգացմանը, ինչը համապատասխանում է հանրակրթական դպրոցի պետական կրթական չափորոշիչների պահանջներին:

Եզրակացություններ

Մեր ատենախոսական հետազոտության մեթոդաբանական հիմքերի վերլուծությունը ցույց տվեց, որ տարրական դպրոցում հենքային առարկաների դասավանդումը պետք է իրականացնել անձնակողմնորոշված, մարդասիրական, հաղորդակցական, զարգացնող, կարողունակությունների վրա հիմնված մոտեցումների հիման վրա:

Այս տեսլականով պայմանավորված՝

1. Աշխատանքի խնդիրներին համապատասխան՝ ուսումնասիրվել և վերլուծվել են հիմնախնդրի վերաբերյալ ժամանակակից հոգեբանական և մանկավարժական մոտեցումներն ու ուղղությունները, դիտարկվել է տարբերակված ուսուցման հիմնախնդրի վիճակը հանրակրթական դպրոցներում:

Հիմնավորվել է, որ ներդասարանային տարբերակված ուսուցման հետաքրքիր ձևերը, աշակերտի գործունեությունն ակտիվացնող, փոխներգործուն մեթոդները, ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները, դասերի տեսակները, տարբերակված տարամակարդակ առաջադրանքները, ուսուցման հեղինակային մեթոդները, ուսուցանող և զարգացնող տարբերակված խաղերը, հայտորոշիչ թեստերը և գնահատման ձևերը արդյունավետ են դարձնում տարբեր ընդունակություններ և ուսումնական հնարավորություններ ունեցող կրտսեր դպրոցականների ուսումնահիմացական գործունեությունը, գիտելիքների յուրացման գործընթացը, մտածողության տարբեր ձևերի, կարողությունների և հմտությունների զարգացումը:

2. Բացահայտվել և հաշվի են առնվել տարրական դպրոցում տարբերակված տարամակարդակ ուսուցման սկզբունքներն ու առանձնահատկությունները:

3. Տարրական դպրոցի համար մշակվել և առաջադրվել են տարբերակված ուսուցման արդյունավետ ուղիներ, որոնք ներառում են՝ ներդասարանային տարբերակված ուսուցման հետաքրքիր ձևեր, աշակերտի գործունեությունն ակտիվացնող, փոխներգործուն և հեղինակային մեթոդներ, ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ, դասերի տեսակներ, տարբերակված տարամակարդակ առաջադրանքներ, խաղեր, հայտորոշիչ թեստեր և գնահատման ձևեր:

4. Մշակվել և տարրական դպրոցում ներդրվել է ներդասարանային տարբերակված տարամակարդակ ուսուցման մոդելը, որում ներառնված կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության առանձնահատկությունները, տարրական դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման սկզբունքները, ժամանակակից մանկավարժական մոտեցումները, ուսուցման փոխներգործուն մեթոդներն ու տեխնոլոգիաները, տարամակարդակ տարբերակված առաջադրանքները, ուսուցման հեղինակային մեթոդներն ու խաղերի համալիրը, հատորոշիչ թեստերը և գնահատման ձևերը ակնհայտորեն նպաստում են սովորողների գիտելիքների արդյունավետ յուրացմանը, կարողությունների և հմտությունների զարգացմանը՝ ապահովելով չափորոշչային պահանջները:

5. Առանձնացվել են տարբերակված ուսուցման մանկավարժական պայմանները, որոնց ապահովումը արդյունավետ է դարձնում մեր մշակած ներդասարանային տարբերակված տարամակարդակ ուսուցման մոդելի գործառնությունը:

6. Դասավանդվող առարկաների բովանդակության պետական չափորոշիչներով սահմանված սովորողների գիտելիքների նվազագույն ծավալի յուրացման և հետաքրքրությունների, կարողությունների, մտածողության տարբեր ձևերի զարգացմանն ուղղված մեր կողմից մշակված և տարրական դասարաններում ներդրված տարբերակված ուսուցման ուղիների արդյունավետությունը հաստատում են հետազոտության ընթացքում ստացված բարձր մակարդակի ցուցանիշները և դրական դինամիկան:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են ատենախոսի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. Հովսեփյան. Ա. Յ. Ուսումնական քարտերի կիրառումը տարբերակված ուսուցման գործընթացում «Մանկավարժական միտք» ամսագիր, Երևան, 2021թ., էջ 41-49:
2. Հովսեփյան. Ա. Յ. Տարբերակված, տարամակարդակ ուսումնական քարտերի կիրառումը ուսուցման գործընթացում «Մանկավարժական միտք» ամսագիր Երևան, 2022թ., էջ 191-200:
3. Հովսեփյան. Ա. Յ. «Մաթեմատիկա» առարկայից տարբերակված թեմատիկ գրավոր աշխատանքների իրականացումը տարրական դպրոցում «Մանկավարժական միտք» ամսագիր,Երևան, 2022թ., էջ 80-89:
4. Овсепян А. Ю. Исползование разноуровневых учебных карточек в процессе дифференцированного обучения с одаренными учениками«Актуальные научные исследования в современном мире» журнал.Переяслав 2021. Ст.287-291
5. Овсепян А. Ю. Применение дифференцированных обучаюших и развиваюших игр в начальной школе как средство повышения эффективности обучения «Actual scientific research in the modern world»,Pereiaslav 2023. Page 119-126
6. Овсепян А. Ю. Дифференцированные, разноуровневые диагностические тесты и задания в начальных классах как средство повышения качества обучения учашихся. «Actual scientific research in the modern world», Pereiaslav 2023.Page 119-126.

ОВСЕПЯН АСТХИК ЮРИКОВНА

ПУТИ РЕАЛИЗАЦИИ ПРОБЛЕМЫ ДИФФЕРЕНЦИРОВАННОГО ОБУЧЕНИЯ В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01- «Теория и история педагогики».

Защита диссертации состоится в 20-го июня 2024года в 12^{00}, на заседании специализированного совета «Педагогика» 020 Комитета по Высшему

Образованию и Науке при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна. Адрес: 0010, Ереван, ул.Тиграна Меца 17

РЕЗЮМЕ

Актуальность исследования. В современную эпоху образовательные учреждения сталкиваются с новыми задачами обучения, которые требуют от них модернизации содержания обучения, гуманизации образования, формирования у учащихся гуманитарных ценностей и гражданской позиции, разработки новых механизмов адаптации учащихся к меняющимся запросам общества, учета дифференцированных и индивидуализированных принципов в процессе обучения и применение современных педагогических технологий для полной реализации творческого потенциала и развития способностей каждого отдельного ученика.

В этом контексте технология дифференцированного обучения, особенно в условиях современного инклюзивного образования, стала одной из технологий эффективной организации учебного процесса. При исползовании которой **предоставляется учащимся возможность** с разными способностями и склонностями планировать собственную образовательную траекторию, отвечающую его образовательным потребностям. В этом контексте технология дифференцированного обучения дает возможность учителю учитывать специфику познавательной деятельности, творческого потенциала и способностей каждого ученика, тем самым способствуя их развитию.

Современная педагогическая парадигма и методические подходы к организации эффективного образования ориентированы на формирование личности, наделенной индивидуально-характерными качествами и психическими особенностями, способной иметь собственную гражданскую позицию, систему ценностей, умеющей отстаивать свою точку зрения, мыслить критически и действовать самостоятельно, выполнять различные социальные роли. С этой точки зрения применение технологии дифференцированного обучения в образовательном процессе делает эффективным процесс развития и социализации каждого обучающегося.

Цель исследования: Предложить пути эффективного решения проблемы дифференцированного обучения в начальной школе и разработать модель внутриклассного дифференцированного обучения.

Задачи исследования

1. Изучить и проанализировать теоретико-методологические основы дифференцированного обучения и состояние проблемы в общеобразовательных школах.

2. Выявить и учесть принципы и особенности дифференцированного обучения в начальной школе.
3. Разработать и предложить эффективные пути дифференцированного обучения для начальной школы, которые включают интересные формы дифференцированного обучения, интерактивные методы, , современные педагогические технологии, виды уроков, разноуровневые задание, игры, диагностические тесты.
4. Разработать и внедрить в начальной школе эффективную модель внутриклассного дифференцированного разноуровневого обучения, включающую особенности учебной деятельности младших школьников, принцыпы личностно-ориентированного, инклюзивного, дифференцированного обучения, добровольности, самостоятельности, уважение личности и прав ребенка, доверие, адаптации учебной программы и системы оценивания знаний, современные педагогические подходы, интерактивные методы и технологии обучения, дифференцированные по уровням задания, игры, диагностические тесты.
5. Предложить комплекс педагогических условий, обеспечивающая эффективность функционирования разработанной модели дифференцированного разноуровневого обучения.

Научная новизна исследования.

1. Разработаны и внедрены в практику общеобразовательных начальных школ пути организации дифференцированного разноуровневого обучения, которые включают эффективные методы, технологии и средства обучения, в частности дифференцированные разноуровневые задании, авторский учебно-развивающие игры, диагностические тесты.
2. Разработан и внедрен комплекс авторских дифференцированных учебно-развивающих дидактических игр в начальной школе.
3. Разработана модель внутриклассного дифференцированного разноуровневого обучения, которая включает в себя:
• цель, принципы и особенности дифференцированного обучения в начальной школе,• современные педагогические подходы,
• интерактивные, авторские методы и технологии обучения в начальной школе, виды уроков, дифференцированые разнородные задания, тематические, классные задания, игры, диагностические тесты, способствующие полноценному самовыражению учащихся с разными возможностями к обучению и уровнями развития, а также реализации государственных стандартных требований.
4. Предложен комплекс педагогических условий, обеспечивающих эффективное функционирование модели дифференцированного обучения.

Теоретическая значимость исследования.

• Предложены новые подходы и теоретические положения организации дифференцированного обучения в начальной школе в условиях инклюзивного образования.

• Предлагемые пути реализации разноуровневого дифференцированного обучения, новые подходы принципы, авторские методы обучения и комплекс учебно-развивающих игр и теоретические положений обогатят теорию педагогики.

Практическая значимость исследования заключается в том, что результаты исследования могут быть внедрены в учебный процесс начальной школы с целью эффективного усвоения знаний учащимися, развития их творческих, исследовательских умений, различных способов мышления, а предлагаемые пути дифференцированного разноуровневого обучения и педагогические условия, авторские методы преподавания, набор обучающих и развивающих игр станут практическим подспорьем учителям общеобразовательных школ.

Объем и структура диссертации. Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка литературы (107 наименований), приложений. Содержит 2 таблицы, 9 диаграм. Общий объем работы составляет 189 компьютерных страниц.

HOVSEPYAN ASTGHIK YURIK
WAYS TO REALIZE THE PROBLEM OF DIFFERENTIATED LEARNING IN ELEMENTARY SCHOOL

The dissertation is submitted to claim the degree of Candidate of Pedagogical Sciences (PhD) in specialisation field 13.00.01 - "Theory and History of Pedagogy". The defence will be held on June 20, 2024, at 12^{00}, at Khachatur Abovian Armenian State Pedagogical University (the address to attend: 0010, Yerevan, 17 Tigran Mets), at the session of Specialised Defence Council 020 in "Pedagogy"of the Higher Education and Science Committee of the Republic of Armenia

SUMMARY

The relevance of the research In the modern era, educational institutions face new learning challenges that require public schools to modernise the content of education, humanise education, and develop humanitarian values and citizenship in students, hence developing new mechanisms for students to adapt to the changing demands of society, taking into account differentiated and individualised principles in the learning process and using technology to fully realise the creative potential and development of the abilities of each individual learner.

In this context, the technology of differentiated learning, especially under modern, inclusive education requirements, has become one of the technologies for effective

educational process organisation. It provides learners of different abilities, learning opportunities and aptitudes with the opportunity to cover their own educational trajectory in line with their educational needs. This allows the teacher to take into consideration the specificities of each learner's cognitive activities, creative potential and abilities, thereby contributing to their development.

The modern pedagogical paradigm and methodological approaches to the organization of effective education are focused on the formation of a person endowed with individual-characteristic qualities and mental characteristics, capable of having his own civic position, a system of values, able to defend his point of view, think critically and act independently, perform various social roles. From this point of view, the application of differentiated learning technology in the educational process makes the development and socialization process of each student effective.

The aim of the research: to propose ways to effectively solve the problem of differentiated instruction in elementary school and develop a model of in-class differentiated instruction.

The objectives of the research

1. To study and analyse the theoretical and methodological foundations of differentiated learning and the respective situation in secondary schools;
2. To identify and take into account the principles and features of differentiated learning in elementary schools;
3. To develop and suggest effective ways of differentiated learning for elementary school, including engaging differentiated learning formats in the classroom, interactive methods that might activate learners' activity, modern pedagogical technologies, class formats, differentiated-level tasks, games, and diagnostic tests.
4. To develop and implement in elementary schools an effective model of an intra-class differentiated level of education, including the features of the educational activities for younger schoolchildren, inclusiveness of education, personal orientation, individualisation, differentiation, individual approach, volunteering, and independence. At the same time, the following prerequisites are highlighted: personality respect and children's rights, trust, principles of adjustments in the curriculum and assessment system, thus preparing children for life, and, finally, making use of modern pedagogical approaches, interactive teaching methods and technologies, level-differentiated tasks, games, and diagnostic tests.
5. To propose a set of pedagogical conditions for differentiated learning, the provision of which will make the work of the developed intra-class model of differentiated multi-level learning effective.

The research novelty consists in:

1. developing and introducing into the practice of public elementary school methods of organising differentiated education, including effective teaching

methods, technologies, and tools, in particular differentiated multitasking, diagnostic tests and games;

2. developing and introducing a set of authors/researchers specialising in differentiated educational and developmental didactic games in elementary schools;

3. developing a model of in-class differentiated multilevel learning, which includes:

. principles and peculiarities of differentiated learning in elementary school,

.modern pedagogical approaches,

. interactive, author's methods and technologies of teaching in elementary school, types of lessons, differentiated heterogeneous tasks, thematic, class, independent and homework assignments, games, diagnostic tests that promote full self-expression, self-actualization of students with different learning abilities and levels of development, as well as the implementation of state standard requirements for the primary level of general education schools.

4. proposing a set of pedagogical conditions to ensure the efficiency of the differentiated learning model.

Theoretical relevance of the research

- It proposes new approaches and theoretical principles for organising differentiated education in primary schools within the context of inclusive education.
- It suggests methods of differentiated learning, new approaches to the organisation of differentiated education, principles, unique teaching methods, a set of educational and developmental games and theoretical provisions which are meant to enrich the pedagogical theory.

The practical relevance of the research lies in the fact that the results of the study can be implemented in primary schools with the aim of effectively boosting the assimilation of knowledge, creativity, research abilities and skills, various ways of thinking, and the proposed differentiated teaching methods and pedagogical conditions, the author's teaching methods, a set of educational and developmental games, which will be of practical assistance for teachers of secondary schools as well.

The scope and structure

The dissertation consists of an introduction, two chapters, conclusions, a list of 107 references, and appendices. The volume of the dissertation is 189 computer pages, of which 33 pages are appendices, containing 2 tables and 9 diagrams.